ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

քաղաք Երևան 03.01.2023թ.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ ՀՀ ՏԿԵՆ) միգրացիոն ծառայությունը, ի դեմս ծառայության պետ Ա. Ղազարյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս կազմակերպության տնօրեն Մ. Մեժլումյանի (այսուհետ՝ Դրամաշնորհ ստացող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N2111-Ն որոշմամբ նախատեսված բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 07 խմբի 01 դասի (այսուհետ՝ Որոշում) «Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» ծրագրով Միգրացիոն ծառայության համար օրենքով նախատեսված միջոցներից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ին՝ միջոցառումների (այսուհետ՝ աշխատանքներ) իրականացման նպատակով, դրամաշնորհ տրամադրման համար կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի «Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում հատկացված դրամաշնորհի գումարից 34,767.600 (երեսունչորս միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարը, ըստ ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական համամասնություններով, պարտավորվում է տրամադրել Դրամաշնորհ ստացողին, սույն պայմանագրի 1.2-րդ կետով նախատեսված փախստականներով բնակեցված կացարաններում սպասարկման աշխատանքներ իրականացնելու համար:

1.2. Սույն պայմանագրով Դրամաշնորհ ստացողը պարտավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում Նոր Նորքի 2-րդ զանգվ., Մոլդովական փողոց 29/1 և Շիրակի 2ա/7, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Հատիսի փ. ճարտարագիտական քոլեջ հանրակացարանի և Արարատի մարզի Դարբնիկ գյուղի Անդրանիկի 4-ի, նախկին գյուղատնտեսական քոլեջ հանրակացարանային մասնաշենքերում կատարել հետևյալ աշխատանքները՝

1.2.1. հանրակացարաններում բնակվող փախստական և ոչ փախստական (տեղաբնակ) ընտանիքների և բնակիչների հաշվառում.

1.2.2. հանրակացարանային մասնաշենքերում ընդհանուր օգտագործման տարածքների պահպանում.

1.2.3. հանրակացարանային մասնաշենքերում էլեկտրասնուցման ապահովում.

1.2.4. հանրակացարանային մասնաշենքերում կոմունալ սպասարկման ծառայությունների ժամանակին կատարման հսկողություն.

1.2.5.հանրակացարանային մասնաշենքերում սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման հսկողություն.

1.2.6. հանրակացարանային մասնաշենքերում ջրամատակարարման և ջրահեռացման /կոյուղի/ համակարգի անխափան գործունեության կազմակերպում.

1.2.7 հանրակացարանային մասնաշենքերում ներքին կարգ ու կանոնի ապահովում.

1.2.8 բնակիչներին անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկանքների տրամադրում.

1.2.9. հանրակացարանային մասնաշենքերում ազատ սենյակների առկայության վերաբերյալ գրավոր տեղեկատվության ներկայացնում Հայաստանի Հանրապետության տրածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայություն.

1.2.10.հանրակացարանային մասնաշենքերում երկար ժամանակ չբնակվող կամ անօրինական զբաղեցրած սենյակներն ազատելու նպատակով դատարան համապատասխան հայցադիմումի ներկայացում և այդ մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայությանը տեղեկացում.

1.2.11.անհրաժեշտության դեպքում իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, ինչպես նաև տեղաբնակ ընտանիքների հետ պայմանագրի կնքում.

1.2.12. օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Դրամաշնորհ ստացողի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, պահանջել տեղեկատվություն կատարվող աշխատանքների բնութագրերի վերաբերյալ.

2.1.2. կատարված աշխատանքներում թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել վերացնել նշված թերությունները, ներկայացնել առաջարկություններ.

2.1.3. պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը.

2.1.4. վերահսկել կազմակերպությանը հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը.

2.1.5. օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.2. Դրամաշնորհ ստացողն իրավունք ունի՝

2.2.1. Պետական մարմնից պահանջելու վճարել սույն պայմանագրին համապատասխան մատուցված ծառայությունների դիմաց տրամադրվող դրամական հատկացումները.

2.2.2 տեղեկացնել Պետական մարմնին սույն պայմանագրով նախատեսված գործունեության ընթացքում տեղ գտած թերությունների վերաբերյալ.

2.2.3 օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ընդունել սույն պայմանագրի N 2 հավելվածին համապատասխան մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների արդյունքները.

2.3.2. սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարն ամսական համամասնություններով փոխանցել Դրամաշնորհ ստացողի գանձապետական հաշվին.

2.3.3.պարբերաբար վերլուծել Դրամաշնորհ ստացողի կողմից մատուցվող ծառայությունները, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

2.4. Դրամաշնորհ ստացողը պարտավոր է՝

2.4.1. ապահովել 1.2 կետին համապատասխան ծառայությունների մատուցումը փախստական անձանց.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև յուրաքանչյուր ամսվա 7-ը Պետական մարմնին ներկայացնել նախորդ ամսվա գումարների հայտ-պահանջագրերը և ծառայությունների ընդունման-հանձնման ակտերը՝ համաձայն Հավելվածներ 1-ի և 2-ի, ուղեկցող գրությամբ.

2.4.5. Պետական մարմին ներկայացնել օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքների իրականացման մասին հաշվետվություններ՝ եռամսյակային և տարեկան, իսկ տարեվերջում՝ տարեկան արդյունքների ամփոփ հաշվետվություն, անհրաժեշտության դեպքում կից բացատրագրով.

2.4.6. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ գնումների կանոններին համապատասխան.

2.4.7. միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև **2023թ. թվականի դեկտեմբերի 22-ը:**

3. Դրամաշնորհի տրամադրման և ծախսման կարգը

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն այդ կետում նշված նպատակներին համապատասխան ծրագրերի իրականացման համար:

3.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցների, կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում կատարվում է ոչ նպատակային օգտագործված գումարի հետգանձում:

3.3. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը պայմանագրի 1.1 կետում նշված գումարը Դրամաշնորհ ստացողի փաստացի կատարած աշխատանքների և մատուցած ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ Դրամաշնորհ ստացողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով, Պետական մարմին ներկայացված հայտ-պահանջագրերի և ընդունման-հանձնման ակտերի հիման վրա, մինչև հաջորդող ամսվա 10-ը:

3.4. Դրամաշնորհ ստացողը պետք է 1.1 կետում նշված ֆինանսական միջոցների հաշվապահական հաշվառումը վարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Պայմանագրով սահմանված պայմանների չկատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2023թվականի դեկտեմբերի 31-ը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Պայմանագիրը կարող է փոխվել կամ լուծվել Կողմերի համաձայնությամբ:

7.2 Պայմանագրի փոփոխությունը կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր և ստորագրվում է երկու Կողմերի կողմից:

7.3 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ամբողջությամբ կամ մասամբ լուծել կամ փոխել սույն պայմանգրի որևէ պայման:

7.4 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7.5 Սույն պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Դրամաշնորհ ստացողը**
ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայություն	«Հանրակացարաններ» ՊՈԱԿ
ք. Երևան, Կ. Ուլնեցու 31	ք. Երևան, Մոլդովական 29/1
ՀՀ ՖՆ գանձապետական հաշվի համար	ՀՀ ՖՆ գանձապետական հաշվի համար
Հ/Հ 900011500023	Հ/Հ 900018002098
ՀՎՀՀ 00259325	ՀՎՀՀ 00874676
Միգրացիոն ծառայության պետ	«Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի տնօրեն
_____Ա. ՊԱՊԱՔԱՐՅԱՆ	_____Մ. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Հավելված 1

ՀԱՅՏ-ՊԱՀԱՆՋԱԳԻՐ

_____

կազմակերպության անվանումը

2023թ. ---------- ամսում

N/N	Ծախսերն ըստ անվանումների և տեսակների	Ներկայացված ծախսը	Ընդունված է վճարման
	Ընդամենը		

Տնօրեն՝ _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____

Հավելված 2

ԱԿՏ №

ՀԱՆՁՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

_____2023թ.

Պայմանագիր անվանումը_Դրամաշնորհի հատկացման պայմանագիր N1
Պայմանագրի կնքման ամսաթիվը_____թ.
Պայմանագրի համարը _____
Դրամաշնորհի հատկացնող ՀՀ ՏԿԵՆ ՄԾ ի դեմս ծառայության պետ
_____ և _____-ը /այսուհետ կատարող/ ի դեմս
_____

Պայմանագրի շրջանակներում կատարողը_____2023թ._____
ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Միջոցառումների/աշխատանքների					
Անվանումը	Համառոտ նկարագիր/բովանդակություն	Կատարված Գործառույթների նկարագիրը	Արդյունքները	Վճարման վերջնական ժամկետը,ամիսը, ամսաթիվը	Պահանջվող գումարը
Ընդամենը					

Հանձնեց

_____
ստորագրություն Կ.Տ

_____
անուն, ազգանուն

Ընդունեց

_____
ստորագրություն Կ.Տ

_____
անուն, ազգանուն